Հասցեատեր՝

«Արարատի Արաքս ՖԱ»
Էլեկտրոնային փոստի հասցե՝ araratiaraqs@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13.02.2025թ.

Վարույթ՝	Կ-023
Խախտում՝	Մրցավարի կողմից մարզչին սխալմամբ դեղին քարտ ցույց տալը (Հոդված 25, 2-րդ կետ, 2.1 ենթակետ)
Առաջնություն՝	Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն 2024-2025
Խաղ՝	«Յունիսպորտ» - «Արաքս-ՖԱՖ», 22.12.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 29–րդ հոդվածի 4-րդ կետի 4.1 ենթակետով և 25-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով՝ չեղյալ համարել հանդիպման մրցավարի կողմից «Արաքս-ՖԱՖ» թիմի գլխավոր մարզիչ Գրիշա Խաչատրյանին (4604) դեղին քարտով զգուշացման արձանագրումը: Ինչպես նաև չեղյալ համարել սխալ դեղին քարտով զգուշացման արձանագրման արդյունքում Գրիշա Խաչատրյանի նկատմամբ (4604) առաջացած որակազրկումների արձանագրումը: Իսկ «Արաքս-ՖԱՖ» թիմի գլխավոր մարզչի օգնական Արմեն Քենդերջյանի (6733) նկատմամբ արձանագրել դեղին քարտով զգուշացում:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: